**GLENDALE UNIFIED SCHOOL DISTRICT**
223 North Jackson St., Glendale, California 91206-4380
Telephone: 818-241-3111, Ext. 1215 • Fax: 818-548-9041

**OFFICE OF THE SUPERINTENDENT**

Հարգելի ծնողներ և խնամակալներ,

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջանի Աշակերտի ձեռքբերումների զեկույցը (վկայական) ընդգրկում է կարևոր տեղեկություններ ձեր զավակի ուսումնական առաջընթացի, ինչպես նաև նրա ջանասիրության, աշխատանքային սովորությունների և վարքագծային ակնկալիքների մասին: Վկայականը (կցված) որպես միջոց է ծառայում որոշակի տեղեկություններ հաղորդելու ձեր երեխայի ցուցաբերած առաջադիմության մասին, որպեսզի դուք կարողանաք հետևել և աջակցել նրա կրթությանը:

Ձեր երեխան, չափանիշների վրա հիմնված, ուսումնական ձեռքբերումների գնահատական է ստացել՝ Լեզվարվեստ, Անգլերեն լեզվի զարգացման (ELD – եթե վերաբերում է), Մաթեմատիկա, Պատմություն, Սոցիալական գիտելիքներ ու Գիտություն առարկաներից:

| | |
|---|---|
| 4 | Աշակերտը չափանիշների ընկալման ու կիրառման ուղղությամբ ցուցաբերել է <u>խոր</u> ըմբռնում (յուրացրել է բազմաթիվ հմտություններ և կիրառել է դրանք բարդ իրավիճակում լուծումներ գտնելու համար) |
| 3 | Աշակերտը չափանիշների ընկալման ու կիրառման ուղղութամբ ցուցաբերել է <u>հմուտ</u> ըմբռնում (յուրացրել է հմտություններ և կիրառել է դրանք հիմնական իրավիճակներում) |
| 2 | Աշակերտը չափանիշների ընկալման ու կիրառման ուղղությամբ <u>մասամբ</u> ցուցաբերել է ըմբռնում (յուրացրել է կամ մասամբ յուրացրել է որոշ հմտություններ, բայց չի հաջողել առանց աջակցության կիրառել դրանք) |
| 1 | Աշակերտը չափանիշների ընկալման ու կիրառման ուղղությամբ ցուցաբերել է <u>չնչին</u> ըմբռնում (չի ըմբռնել ուսուցված հմտությունները ու գաղափարները) |

Ի հավելումն, յուրաքանչյուր առարկայի համար տրվել է ջանասիրության գնահատական: Մարմնամարզության (PE) դասի գնահատականը տրվում է ջանասիրության, դասին մասնակցելու և ցուցաբերած վարքագծի համար: Digital Literacy-ի և տեսողական ու կատարողական արվեստ դասերի գնահատականը նույնպես տրվում է ջանասիրության համար: Աշակերտը ստանում է "S" «Բավարարում է ակնկալիքները» կամ "N" «Բարելավման կարիք կա» գնահատական՝ ջանասիրության, աշխատանքային սովորությունների և վարքագծային ակնկալիքները բավարարելու համար:

Հավելյալ տեղեկություններ, ներառյալ պայմանական նշանների բացատրությունը և ցանկը, կարող եք գտնել ձեր զավակի վկայականի ետևի էջում: Անգլերեն սովորող աշակերտի վկայականի ծնողի ուղեցույցը և տեղեկությունը կարող եք գտնել https://www.gusd.net/Page/925. կայքէջով:

Խնդրվում է ձեզ մոտ պահել ձեր զավակի վկայականը և **միայն ստորագրված ծրարը վերադարձրեք ձեր զավակի ուսուցչին՝** որպես հաստատում, որ ստացել եք տեղեկությունը: Խնդրվում է ուշադիր վերանայել վկայականը, քննարկել ձեր երեխայի հետ և ցանկացած հարցի համար կապվել ձեր երեխայի ուսուցչի հետ: Տան և դպրոցի միջև հաղորդակցությունը հիմնական գործոնն է աշակերտի դասարանային հաջողության համար:

Ուսումնական խորհրդի անունից ցանկանում եմ շնորհակալություն հայտնել՝ ձեր դպրոցի ու ուսուցիչների նկատմամբ ձեր ցուցաբերած աջակցության համար: Միասնական ջանքերով մենք կարող ենք ձեր երեխաներին նախապատրաստել իրենց ապագայի համար:

Հարգանքներով՝

Winfred B. Roverson, Jr.
Դպրոցների գերատեսուչ